



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԸ ՀԻՐԸՆԿԱԼԵՑ**  
**ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ**  
**ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ**

Միջին Արեւելքի Ուղղափառ եկեղեցիներու՝ Ղրպտի Ուղղափառ, Ասորի Ուղղափառ եւ Հայց. եկեղեցւոյ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Առաջնորդները Երեքշաբթի, 1 Ապրիլին ունեցան իրենց հերթական հանդիպումը, օրակարգի վրայ ունենալով միացեալ ծրագիրներ ու գործակցութեան նախագիծեր:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց շէնքի մէջ առաջին անգամ ըլլալով հիւրընկալեց Ղրպտի Ուղղափառ համայնքի Առաջնորդ Գերշ. Տ. Սրապիոն Եպիսկոպոսն ու Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդ Եուճին Գափլան Արքեպիսկոպոսը: Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեանի իբրեւ ներկայացուցիչ, ժողովին կը մասնակցին Գերպ. Տ. Տաճատ Ծ. Կրդ. Եարտըմեան եւ Արժ. Տ. Արշակ Քհնյ. Խաչատուրեան: Ժողովին կը մասնակցէին նաեւ երեք եկեղեցիներու հոգեւոր հայրեր:

**ՄԻԱՑԵԱԼ ԱՂՕԹՔ՝ ՄԱՏՐԱՆ ՄԵՋ**

Ժողովական աշխատանքներու սկսելէ առաջ, Առաջնորդներն ու հոգեւորականները միացեալ աղօթքի պահ մը ունեցան «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ: Ապա, նկատի ունենալով, որ Առաջնորդներու ժողովը առաջին անգամ ըլլալով տեղի կ'ունենար Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց շէնքի յարկին տակ, Առաջնորդ Սրբազանը հիւր հոգեւորականներուն ծանօթացուց տարբեր բաժանմունքներն ու աշխատանքի մարզերը: Հիւր հոգեւորականները գոհունակութիւն արձանագրեցին իրագործումին համար եւ շնորհաւորեցին Առաջնորդ Սրբազանը:

**ԴԻԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ**

Ժողովը տեղի ունեցաւ Ազգ. Առաջնորդարանի դահլիճին մէջ: Առաջին հերթին, տեղի ունեցաւ յառաջիկայ տարեշրջանի դիւանի ընտրութիւնը: Գերշ. Տ. Սրապիոն Եպսկ. վերընտրուեցաւ Առաջնորդներու Խորհուրդի

ատենապետ, իսկ Հայր Էնթընի Աթալլա վերընտրուեցաւ ատենադպիր: Առաջնորդ Սրբազանն ու ժողովակաները գնահատանքով արտայայտուեցան դիւանի աշխատանքներուն մասին: Առաջնորդ Սրբազանը շնորհաւորեց նոր դիւանը:

Ժողովը գեկուցումներ լսեց Կիրակնօրեայ դպրոցներու եւ երիտասարդական խմբակներու համատեղ գործունեութեան ու ծրագիրներուն մասին, կատարելով իրագործումներուն արժեւորումը: Որոշուեցաւ, որ Կիրակնօրեաներու յառաջիկայ միատեղ ձեռնարկը տեղի ունենայ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ յարկին տակ, հիւրընկալութեամբ մեր Թեմին: Ընդհանուր խորագիրն է Քրիստոնէական Դաստիարակութիւնը, Եկեղեցի-Տուն յարաբերութիւնը: Ժողովը նաեւ որոշեց յաւելեալ մղում տալ երիտասարդական խմբակներու գործունեութեան: Այս նպատակով, վերակազմուեցաւ միացեալ խորհուրդը, որուն կ'անդամակցին իւրաքանչիւր թեմէ երկուքական ներկայացուցիչ:

### **ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԻ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ**

Ուղղափառ եկեղեցիներու այս միացեալ խորհուրդը երեք տարի առաջ հաստատած էր գեղեցիկ աւանդութիւն մը. տարուան ընթացքին, եկեղեցիներուն մէջ կը կազմակերպուի հանգանակութիւն եւ գոյացած գումարը կը յատկացուի բարեսիրական ու եկեղեցաշինական նպատակներու: Այս տարի, հանգանակութենէն գոյացած գումարը պիտի տրամադրուի Լիբանանի Պուրճ Յամուտի շրջանի Նորաշէն թաղամասի Ս. Վարդանանց եկեղեցւոյ: Այս առիթով, Առաջնորդ Սրբազանը շնորհակալութեան խօսք ուղղեց հոգեւոր եղբայրներուն ու իրենց համայնքներուն, բարձր գնահատելով անոնց նուիրաբերումը: Ան նաեւ յուշանուէրներ յանձնեց Առաջնորդներուն ու հիւր հոգեւորականներուն:

Ժողովական աշխատանքներու աւարտին, Առաջնորդ Սրբազանը ներկայ հոգեւորականները հիւրընկալեց ճաշով: Նշենք, որ ճաշի պատրաստութիւնը յանձն առած էր Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը:

### **WESTERN PRELACY HOSTS MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS**

On Tuesday, April 1<sup>st</sup>, the Council of Oriental Orthodox Bishops of the Western United States gathered at the Western Prelacy for the first time after the construction of the new headquarters for their regular meeting, which was hosted by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Participating in the meeting were H.G. Bishop Serapion, Primate of the Coptic Orthodox Church, H.E. Mor Clemis Eugene Kaplan, Primate of the Syriac Orthodox Church, and Very Rev. Fr. Dajad Yardemian and Rev. Fr. Arshag Khatchadourian representing H.E. Archbishop Hovnan Derderian, Primate of

the Western Diocese of the Armenian Apostolic Church. Clergy members from the four churches also participated in the meeting.

Upon their arrival, the Prelates and clergy gathered at the “St. Dertad and St. Ashkhen Chapel” for a collective prayer, following which the Prelate guided them around the new headquarters to familiarize them with the various departments and activities of the Prelacy. The Bishops and clergy congratulated the Prelate on the successful realization of the project.

The meeting began with the election of the divan with Bishop Serapion being reelected as Chairman and Fr. Antony Attallah as Secretary. The Council members commended the work of the divan and congratulated them on their reelection. An evaluation of past Sunday School and youth group events took place and was followed by the Council deciding on the next Sunday School event which will be hosted by the Prelacy at St. Mary’s Church in Glendale. With regards to the youth groups, a committee of representatives from each Church was reestablished to oversee these specific activities.

The next item on the agenda was the discussing and designating of a church in need of assistance. Three years ago, a tradition was established for member churches to set aside a day of fundraising at their respective parishes and to allocate the proceeds to a church in need. The Council designated St. Vartanants Church in the Bourj Hammoud area of Lebanon for which the Prelate expressed thanks. The meeting concluded with the Prelate presenting the Prelates and clergy members with mementos.

The gathering concluded with lunch at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall hosted by the Prelate and organized by the Ladies Auxiliary.